



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 35-Ա

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը

Դալար համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2019թվականի նոյեմբերի 21-ի թիվ 12 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արարատի մարզի Դալար համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման թույլտվություն տալու, օտարման մեկնարկային գինը և ժամկետը սահմանելու մասին:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

ՄԵՋԼԻՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԳՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 36-Ա

**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ,
ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին ընդհանուր աճուրդ-վաճառքի կարգով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը՝

1. Կոմիտասի փողոց թիվ 61/1 հասցեում գտնվող հողամասը /ծածկագիր՝ 03-032-0026-0044/, մակերեսի չափը՝ 0,05 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Այլ հողեր: Օտարվող անշարժ գույքի մեկնարկային գին սահմանել 264000/երկու հարյուր վաթսուներկու հազար/ ՀՀ դրամ:
2. Անդրանիկի փողոց թիվ 69/2 հասցեում գտնվող հողամասը /ծածկագիր՝ 03-032-0113-0019/, մակերեսի չափը՝ 0,21255 հա, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների: Օտարվող անշարժ գույքի մեկնարկային գին սահմանել 1122264/մեկ միլիոն հարյուր քսաներկու հազար երկու հարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամ:

2. Դալար համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի ընդհանուր աճուրդ-վաճառքը կազմակերպել 2019թ. դեկտեմբերի 23-ին:

Կողմ -5
 ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
 ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
 ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
 ՄԵԶԼՈՒՄՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ
 ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱԶԻԿ
 ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դեմ -0
 Ձեռնպահ -0

ԳՈՒ ԴԵՏՐՈՍՅԱՆ

